

Գովելով յիշեալ պարոնայից բարե-
պաշտութիւնը՝ Ամսագրոյս միջոցաւ եւ
շնորհակալութեամբ կհրատարակեմք ի
տեղեկութիւն մեր սիրելի Ազգայնոց:

Յառաջակայ ուսումնական շրջանում
ի Ս. Գէորգեան ձեմարան ընդունուե-
լիք աշակերտաց վերաբերեալ հետագայ
հրահանգը ի կողմանէ ձեմարանական
Վարչութեան կը հրատարակուի, որոյ
առանձին տպուած օրինակները պէտք
եղած տեղեաց եւս պիտի խրկուին ի կա-
րեւոր հրահանգութիւն:

ՀՐԱՀԱՆԳ

ՎԵՍՆ ԲՆՏՔՈՒԹԵԱՆ ԱՃՎԿԵՐՏԱՅ ՈՐՔ ԿԵՄԻՑԻՆ ՄՏԱՆԵԼ ՅԵՄԱՋԻՆ ԴԵՍԵՐԵՆ ԾԵՄԵՐԵՄԵՐՍ

Ի. ՍԵՊՏԵՄԵԲԵՐԻ 1877 ՏԱՐԻՈՅԱ:

Ըստ հրամանի Վեհափառ Հայրապե-
տի ամենայն Հայոց եւ ըստ սահմանելոյ
ուսումնական ժողովոյ ձեմարանիս՝ ծա-
նուցանի՛ որոց անկն է, զի

Ա. Յառաջիկայ ուսումնական ամի
ձեմարանիս, որոյ սկիզբն է ի 1 Սեպտեմ-
բերի բացցի եւ հինգերորդ դասարան
Դպրանոցական բաժնի սորա:

Բ. Միայն յառաջին դասարանն ըն-
կալեալ լիցին նորամուտ աշակերտք:

Գ. Ընտրելի են սպատանիք առաւելա-
պէս յայնպիսի բազմամարդ հայարնակ
կողմանց՝ յորս չեւ եւս դատանին դըստ-
րոցք կանոնաւորք, ոչ չորեքդասեան
հոդեւոր ուսումնարանք եւ ոչ երկդա-

սեան գպրոցք ծխականք լիովին բարե-
կարգեալք:

Դ. Ընտրելիքն պարտին լինել որք եւ
կամ որդիք աղքատ եւ չքաւոր ծնողաց:

Ե. Ամք հասակի պատանեաց ցանկա-
ցողաց մտանել յառաջին դասարան ձե-
մարանիս պարտին լինել ոչ պակաս քան
զ12, եւ ոչ աւելի քան զ14:

Զ. Պարտ է նոցա քաջառողջս լինել
մարմնով, եւ ունել զբնատուր ուշիմու-
թիւն, զրամանութիւն, զհլութիւն եւ
զպարկեցտութիւն:

Է. Ուսմունքն զորոց հարցաքննելի են
աշակերտք ցանկացողք մտանել յառա-
ջին դասարան ձեմարանիս՝ են

1.) ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, այս ինքն

ա. Գլխաւոր աղօթք (ի ժամադրոց) ուսուակք ի
բերան՝ հանդերձ Թարդմանութեամբ նոցին յաշ-
խարհիկ բարբառ:

բ. Պատմութիւն հին եւ նոր կտակարանաց հա-
մառօտ:

գ. Սկզբունք Քրիստոնէական վարդապետու-
թեան:

2.) ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒ.

ա. Գրավարձ ընթերցումն հայերէն լեզուի՝ հան-
դերձ Թարդմանութեամբ բանից սրբոյ աւետարա-
նին ի զրոց լեզուէ յաշխարհիկն:

բ. Հայերէն Գերականութեան առաջին մասն՝
հանդերձ վերլուծութեամբ մասանց բանի:

3.) ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Զորեքին զիմանակ զործողութիւնը Թուաբանու-
թեան եւ փորձը նոցին:

4.) Ա.Ա.Խ.Ա. ԼԵԶՈՒ.

Վարժ ընթերցանութիւն՝ հանդերձ հայերէն
Թարդմանութեամբ սովորական բառից և խօսից:

5.) Վ.Ա.Յ.Ե.ՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԵՆ ԵՒ Ա.Ա.Խ.
ՍԵՐԵՆ:

6. Յանկացողքն մտանել ի ձեմարանս
պարտին ունել երիս վկայագիրս. 1,
զարձանագրական (մետրիքական) վկա-

յագիր ծննդեան եւ մկրտութեան. 2, զվկայագիր ուսեալ գոլոյ զուսմունսն ի վեր այսր նշանակեալս, եւ 3, զվկայական բժշկի՝ զի հանեալ են զծաղիկ բընական, կամ ընկալեալ զպատուաստ ծաղկին:

Թ. Հոգեւոր տեղական իշխանութիւնք պարտին ստուգել զվկայագիրսն եւ ստորագրութեամբ իւրեանց հաստատել:

Ժ. Ընտրեալքն յաշակերտութիւն ձեմարանիս՝ պարտին գտանիլ ի սուրբ էջմիածին գեթ երկուք եօթնեկօք յառաջ քան զսկզբնաւորութիւն տարեկան դասառութեանց, այսինքն ի 15 օրէ 0-գոստոսի մինչեւ ց20:

ԺԱ. Աշակերտ ոք որ գայցէ ի քաղաքաց կամ ի գիւղօրէից եղելոց արտաքոյ Արարատեան նահանգիս կամ վիճակին Երեւանի, պարտի բերել յաւանդ բուբլիս ժառանք և հինգ կամ աւելի՝ ըստ հեռաւորութեան վայրացն, որպէս զի եթէ հարկ լիցի գառնալ նմա ի հայրենիսն՝ մի ծանրասցին ծախը ճանապարհին ի վերայ ձեմարանիս: Եթէ աշակերտն այն կացցէ մնացէ ի ձեմարանի աստ մինչեւ ցաւարտ ուսումնական ընթացիցն, գումարն այն յանձնի նմա ամբողջ յելսն ի ձեմարանէս:

ԺԲ. Եթէ նորամուտ աշակերտ ոք հարցաքննեալ ի ձեմարանիս՝ ոչ ունիցի զպայմանսն ի վեր այսր նշանակեալս, դարձուցանի յետս ծախիւք առաքողացն զնա:

ԺԳ. Որք միանդամ ցանկանացեն մտանել յաշակերտութիւն ձեմարանիս սրբոյ էջմիածնի, պարտաւորին ոչ միայն

ճշգիւ պահել զկանոնս սորա, այլ եւ աւարտել ի սմին զվեցամեայ ընթացս ուսմանցն սահմանելոց: Խոկ եթէ ոք յաշտկերտաց մտաքերիցէ ի բաց գնալ աստի՛ մինչեւ աւարտեալ զընթացսն, եւ այն ոչ ի պատճառս անբուժելի հիւանդութեան իրիք կամ՝ տկարութեան, եւ ոչ վասն այլ ինչ կարեւոր եւ ծանր պատճառի, այլ յինքնայօժար կամաց, կամ ըստ հաճոյից ծնողացն եւ ազգականաց, — պարտաւորի վճարել ձեմարանիս բուբլիս հաշիւթ և յիւղան վասն միոյ միոյ ամի զոր կացեալ իցէ ի սմա, իրեւ ի հատուցումն փոխարինի սննդեան եւ խնամոց յորս վայելեաց, եւ ինքնակամ հրաժարեալ աստի՛ թերակատար եթող յիւրմէ կողմանէ զգաստիորակութիւն իւր եւ զհրահանգսն, եւ ի գերեւ եհան զակնկալութիւն հիմնագրի ձեմարանիս ի ծախուցն եղելոց յիւր վերայ:

ԺԴ. Զժամանակ ամառնային աւուրց հանգստեան անցուցանեն աշակերտք ի ձեմարանի աստ՝ կամ յամարանոցի սորա (յորժամ պատրաստեացի)՝ պարապելով ի թեթեւագոյն վարժս ուսմանց եւ ընթերցանութեան: — Միայն աշակերտաց Զորբորդի դասարանին, որք գովութեամբ աւարտիցեն ի նմին զուսմունսն (յամս երիս կամ չորս)՝ հրաման լինի չուել ի հայրենիս իւրեանց յետ տարեկան հարցաքննութեանց՝ երկարսեայ ժամանակաւ, այսինքն ի 5 օրէ յունիսի ց15 0գոստոսի՝ ծախիւք ծնողացն կամ առաքողաց զնոսա: